№ 144 Օգոստոսի 6 (18) 1881 Օգոստոսի 6 (18) № 144

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հացի խնդիր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իտալիա։ Ֆրանսիա։ Թիւրքիա։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Գերմանիայից։

ՀԱՑԻ ԽՆԴԻՐ

Մեր և մեր աշխատակցի բազմաթիւ յօդուածներով յարուցված Թիւրքաց Հայաստանի տնտեսական խնդիրը այն հետևանքն ունեցաւ, որ Կ. Պոլսի հայերը բաժանվեցան երկու բանակի վրա։ Բանակներից առաջինը, անդադար աղաղակելով՝ լոյս, լոյս, մերժում է Հայաստանի մէջ տընտեսական ուսում մտցնելու անհրաժեշտութեան գաղափարը և հաւատացած է որ Թիւրքաց հայերի վիճակը կարելի է բարւոքել միմիայն ուսում տարածելով նրանց մէջ։ Սրանց հակառակորդները, այսինքն մեր կուսակիցները այն կարծիքի են որ ժողովուրդը նախ պէտք է ապահովել նիւթապէս, զարգացնել տնտեսապէս և ապա ուսում տարածել ազգի մէջ, կամ գոնէ այդ երկու գործողութիւնները զուգընթացաբար կատարել։

Բայց մեր կարծիքով Կ. Պոլսի հայերի մէջ կազմված այդ երկու բանակների ներկայացուցիչներն էլ անկեղծ չեն իրանց համոզմունքների մէջ, երկու կողմին էլ կեղծաւորութիւն են անում։ Եւ ահա ինչ պատճառով։

Մի ժողովրդի վրա ներգործելու համար, նրան միայն լոյսով կերակրելու, կամ ուսումով և տնտեսապէս զարգացնելու համար՝ հարկաւոր է նախ և առաջ ժողովրդի կեանքը հետազօտել, նրան ուսումնասիրել և ապա նրա ամենաանհրաժեշտ պահանջման համեմատ գործել, մտցնել ազգի մէջ այս կամ այն ուղղութիւն, նայելով թէ ո՞րը այդ ուղղութիւններից աւելի յարմար, աւելի համապատասխան է ժողովրդի կենսական պահանջներին։ Իսկ այդ անելու համար հարկաւոր է նոյն իսկ այն երկրում ապրել, որի բնակիչների օգտի համար գործ կամենում էք գործել և ոչ թէ հեռուից, Կ. Պոլսից վիճաբանել այս կամ այն ուղղութեան լաւութեան կամ վատութեան մասին։

Բայց մինչև որ Կ. Պոլսի հայոց գործիչները, Թիւրքաց հայերի ինտելիգէնցիային պատկանողները նստած կը լինեն Կ. Պոլսում և այնտեղ կը վիճաբանեն լոկ ուսումնական կամ տնտեսական ուղղութեան մասին, Թիւրքիայի մայրաքաղաքից կուզենան առաջնորդել Հայաստանը, այն երկիրը որ նրանք ոչ տեսել և ուսումնասիրել են, ոչ էլ ճանաչում են նրա կարիքները,—Հայաստանի բարւոքման վրա նրանց բոլոր ճառախօսութիւնները՝ կեղծաւորութիւն կը լինեն միշտ։

Նրանք ցոյց են տալիս թէ կամենում են օգնել իրանց հայրենիքին, աշխատել Հայաստանի համար, նուիրել իրանց անձը իրանց ազգի առաջադիմութեանը,—բայց մի և նոյն ժամանակ ոչ ոք նրանցից չէ շարժվում իր տեղից, Կ. Պոլսից, որի հետ կապված են նրանց իւրաքանչիւրի նիւթական շահերը, նրանց հացի խնդիրը։ Նրանցից մինը ունի կալուածներ Կ. Պոլսի մէջ,—այդ կալուածները նա չի թողնի. միւսը փաստաբան է, բժիշկ է,—իր վաստակը նա չի թողնի ու չի գնայ Հայաստան իր անձը ժողովրդի ծառայութեանը նուիրելու. երրորդը Բ. Դրան էֆէնդի է, պետական ծառայ է,—նա իր ծառայութիւնը չի թողնի....

Այսպիսով պարոնների բոլոր վիճաբանութիւնները, բոլոր հակառակութիւնները մի ճշմարիտ ծանր աչքով չը պէտք է ընդունել, չը պէտք է կարծել որ նրանց ձգտումները մի որ և է կշիռ ունեն։ Այդ բոլորը կեղծաւորութիւն է. հացի խնդիրը նրանց ստիպում է և միշտ կը ստիպէ Կ. Պոլսում մնալ, նրանց անբողջ ազգասիրութիւնը կայանում է և կը կայանայ միմիայն փայլուն լրագրական յօդուածների մէջ, որոնց հրատարակում են „Մասիսի“ կամ „Մանզումէի“ մէջ, կամ մի քանի հրահանգների մէջ, որ ուղարկում են իրանց մի քանի դպրոցներին, որոնց հիմնել են Հայաստանի այս և այն անկիւնում...

Բայց միթէ լոյսի կուսակիցները չեն հասկանում որ տնտեսական ուղղութեան պաշտպանողները ուղիղ են ասում, որ եթէ նրանք գնային Հայաստան, այնտեղ տեղափոխէին իրանց ամբողջ գործունէութիւնը, շուտով կը համոզվէին որ հայերից, ասորիներից, քիւրդերից, Թիւրքերից, եզիդներից բաղկացած Հայաստանցի ժողովուրդը չէ կարող լոկ ուսում, լոկ լոյս ընդունել, քանի որ նա նիւթապէս, տնտեսապէս ապահովված չէ, որ նա փախչում, գաղթում է իր հայրենիքից, որովհետև ապահովված չէ, որ նա աւազակութիւն, մարդասպանութիւն է գործում, որովհետև նա տնտեսապէս զարգացած չէ, որ նա իր մէջ երկպառակութիւն ունի, որովհետև նրան դեռ չէ կապում երկրի, Հայաստանի, հայրենիքի ընդհանուր տնտեսական շահերը։

Եթէ ձեզ համար, փայլուն գրողների համար, այս կամ այն ուղղութիւն պաշտպանողների համար, իդէալական գաղափարներ ունեցողների համար, Կ. Պոլսում անշարժ նստողների համար՝ գլխաւոր շարժառիթը կեանքի մէջ տնտեսական հարցն է, հացի խնդիրն է,—որքան աւելի հայաստանցի ռամիկ, երկրագործ, արուեստաւոր ժողովրդի համար տնտեսական, հացի խնդիրը մեծ նշանակութիւն ունի։

Դիմակներդ հանեցէք, կեղծաւորներ. դուք որ դարդակ յօդուածներ էք գրում և ճառեր կարդում և ձեր փշրանքներով միայն օգնում Հայաստանին, բայց մի քայլ չէք անում Կ. Պոլսից, որովհետև կապված էք նրա հետ ձեր հացի խնդրի պատճառով, գնացէք Հայաստան, ուսումնասիրեցէք, հետազօտեցէք նրան և այնտեղ գործեցէք,—և կը հասկանաք որ նախ պէտք է ապահովել հայ ժողովուրդը տնտեսապէս, սովորեցնել նրան արհեստ, երկրագործութիւն, սովորեցնել նրան արդիւնաբերել և միջոց տալ նրան ընկերութիւնների միջոցով վաճառահանել իր արդիւնաբերածը, ապրեցնել նրան, ապահովել նրան, կը հասկանաք որ հայի, Թիւրքի, քիւրդի, ասորու մէջ եղած երկպառակութիւնների վերջ տալ դուք կը կարողանաք միայն կայացնելով նրանց մէջ ընդհանուր տնտեսական շահերի կապը, և այդպէս միայն կը կարողանաք նրանց ամենքի, բոլոր հայաստանցիների համար, ստեղծել ընդհանուր հայրենիքը, Հայաստանը։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Բադ-Սոդէն 18/30 յուլիսի

Շատ անգամ մենք տեսնում ենք մի և նոյն առարկան, շատ անգամ մենք նշմարում ենք մի և նոյն երեոյթը և նրանց վրա ոչ մի ուշադրութիւն չենք դարձնում, նրանք մեզ վրա ոչ մի ազդեցութիւն, ոչ մի տպաւորութիւն չեն թողնում։ Բայց լինում է ժամանակ, երբ այդ սովորական եղած, հաղարաւոր անգամներ նշմարված երեոյթը մի անգամ ես կրկնվում է ու այնպիսի տպաւորութիւն է թողնում մարդուս վրա, որ նա, այդ մարդը երբէք իր կեանքում չէ մոռանում նրան, մանաւանդ եթէ այդ տպաւորութիւնն է քաղցր ու գեղեցիկ. օրինակ, ինչ մի անսովորական բան է մարդուս համար լսել իր մայրենի լեզուն, չէ՞ որ նա իր ծննդեան օրից սկսած լսել է այդ լեզուն և դա նորա համար եղած է մի շատ հասարակ սովորական բան։ Սակայն դա ինձ համար այդպէս չէր, դա մի այնպիսի ուրախալի ներգործութիւն ունեցաւ ինձ վրա, որ հազիւ թէ կարողանամ մոռանալ այդ երբ և իցէ։ Մայիս ամսի վերջերին քաղաքը ձգեց ինձ կրկին Փարիզ. Գրանդ-Օթելի սրահումը նստած, ծիսխոտը ձեռիս ու սուրճի բաժակը առաջս դրած՝ եկող-գնացողների վրա կը նայէի, հազար ու մէկ մտքեր կը պտտէին գլխիս մէջ ու նրանց ազդեցութեան տակ արդէն մոռացել էի թէ Արաբիոյ անուշահոտ բոյսի սեաչեայ հեղուկը և թէ նոյն իսկ իմ սէր գանվիլը, երբ մի ծանր ձեռք զգացի ուսիս վրա ու մի քաղցր ձայն լսեցի—«բարև էք եկել, բարեկամ, փառք Աստուծոյ որ կերկին զձեզ տեսնալուն պատիւն ունեցայ», այդ իմ ազնիւ բարեկամ Ս. Ռաֆայէլեանն էր։ Սեր սրտերը լցված էին, մենք չէինք կարողանում մի բանի վրա երկարօրէն խօսել, մի հարցից թռչում էինք միւսին, վերջապէս ես հարցրի բարեկամիս «ասէք, խնդրեմ, ինչպէս է ձեր որդին»։

—«Շնորհակալ եմ, լաւ է, բայց ինչու մէկի համար կը հարցնէք, երբ ես երկուսն ունեմ։»

—Գիտեմ, բայց ես երրորդի համար կը հարցնեմ։

—Այսինքն.

—Այսինքն ընթերցարանի, խօսքս նրա մասին է։

Բարեկամս կարմրեց ու ձեռքս սեղմեց «Նա իմ որդին չէ, այլ ազգի որդին, դուք ալ իբրև ազգի անդամներէն մէկը, յուսամ, կը ցանկանաք զինքը այցելելու»։ Մեծ ուրախութեամբ ընդունեցի պարոնի առաջարկութիւնը և մի կէս ժամից յետոյ արդէն մեր կառքը կանգնեց Quartier Latin-ի rue de Claud—Bernard կոչուած փողոցի 47 համարի առջև։

Սանդուղքների վրա բարձրանալով՝ բարեկամս առաջ ընկաւ ու երկրորդ յարկում գտնվող աջ կողմի դուռը բանալով՝ կանգ առաւ չէմքում, ձեռս բռնեց և ուրախութեան ժպիտը դէմքին՝ «լսեցէք» ասաւ. երկար կօրրիդօրի վերջը գտնվող սենեակից խօսակցութեան ձայներ էին լսվում։ Ուշադրութեամբ ականջ դրի այդ ձայներին. ահ, Տէր իմ Աստուած, ինչ ուրախութիւն, ինչ սքանչելի բոպէ, ինչ քաղցր բաբախումն սրտի, խօսակցութիւնը հայերէն էր, լսում ես, ազնիւ ընթերցող, նոր Բաբիլոնի մէջ, երկու միլիոնէն աւելի բնակիչ ունեցող գերահռչակ փարիզի մէջ լսելի էր լինում քո սիրելի մօր քաղցր բարբառը. այո, շատ և շատ անգամ լսած ենք մենք, ես և դու, այդ բարբառը և ուշադրութիւն չենք դարձրած, բայց այժմ որքան քաղցր է հնչում դա ականջիս, որքան ցնծութիւն է պատճառում դա սրտիս. նոյնը կը զգայիր և դու, եթէ մօտս կանգնած լինէիր։ Աչքերս լցված՝ խօսք մի չը կարողացայ արտասանել և չը գիտեմ ինչպէս, կարծես, մի անտեսանելի զօրութեան թելադրութեամբ, մենք երկոքեանս գրկախառնեցինք մէկըմիւսը։ Հասանք վերջապէս և այն երանելի դրան, ուսկից դուրս էին գալի «հայր սուրբ, հայր սուրբ» և «ախբը մէկ լսեցէք, հէր օրհնածներ, ինչ եմ ուզում ասել էֆ» աղաղակները։ Պարզ էր, որ այդ խօսքերը մէկին չէին պատկանում միայն, այլ մի քանի անձանց և յայտնի չէր, թէ յաղթութեան դրօշակը որու ձեռքը կը մնար, եթէ չը շտապէր պ. Ռաֆայէլեանը դուռը բանալ և զինադադարումն առաջարկել քաջութեամբ պատերազմողներին։ Բաւական ընդարձակ և լուսաւոր սենեակում կային եօթը հոգի, վեց կայտառ, աշխոյժ երիտասարդներ-ուսանողներ և մէկ միջին տարիքով սպիտակամօրուս, բայց ոչ պակաս աշխոյժ մարդ, որն էր նոյն իսկ հայր-սուրբը Էջմիածնէն եկած. սենեակի պատերը զարդարված էին Վարդան Մամիկոնեանի, լուսահոգի Ներսէս և Վեհափառ Գէորգ Դ. կաթուղիկոսների պատկերներով և Վեհափառ կաթուղիկոսի ու սրբազան Ներսէս պատրիարքի կոնդակներով զեղցիկ շրջանակների մէջ և ապակու տակ զետեղված, պատին մօտ դրած էր մի պահարան զանազան հայերէն գրքերով լի, իսկ սենեակի մէջ տեղը կանգնած էր կանանչ մահուդով ծածկված մեծ սեղան, որի վրա շարուած էին «Մբշակ», «Մեղու Հայաստանի», «Պսակ», «Մասիս», «Արարատ», «Փարոս», «Արևելեան մամուլ», «Մանզումէի էֆքեար», «Արշալոյս» և այլ հայ օրագիրներ։ Մէկ բանի պակասութիւն խկոյն աչքիս ընկաւ, բայց ես կարծելով թէ սխալվում եմ, սկսեցի աւելի հետաքրքրութեամբ փնտրել պակասողին, բայց ի զուր, չը գտայ. մօտս կանգնած Ռաֆայէլեանը նշմարելով իմ անհանգստութիւնը՝ հարցրեց ինձ, թէ ինչ եմ կամենում, «Փորձը» պատասխանեցի ես։

—Չենք ստանար, ասաւ նա, և զարմանալին այն է, որ պատուարժան խմբագրապետը անցեալ ամառ այստեղ լինելով՝ ինքն անձամբ մեզ խոստացաւ ձրիաբար ուղարկելու իր ամսագիրը, իսկ այժմ, ահա ինչպէս կը տեսնէք, չունենք, մեր նիւթական կարողութիւնն էլ չի ներեր, որ մեր ծախսով բերել տանք. Էհ, եղբայր, հոգուց քաշեց խեղճը փոքր լուութիւնից յետոյ ու շարունակեց, մենք այս ընթերցարանը որ բացինք, մեծ յոյսով էինք, թէ ազգային խմբագիրներն ու հեղինակները կօգնեն մեզ և չեն խնայեր իրանց լումայն, իրանց մտաւոր աշխատանաց արգասիքը այս ազգային նոր շինութեան համար՝ ինչ կը նշանակէ Վենետիկի և Վիէննայի Մխիթարեանների համար մի քանի հատոր գրեանք ուղարկել մեր ընթերցարանին, ինչ կը նշանակէ մեր տաճկաբնակ հայ հեղինակների համար իրանց աշխատութիւններից մի մի օրինակ ուղարկելու մեզ. միթէ մենք ես նրանց եղբայրները չենք, միթէ մենք ես չենք փափագում մեր ազգի գրականութեան և նորա մտաւորական զարգացման հետ ծանօթանալու, մանաւանդ որ մեր ընթերցարանը ուսանողական չէ միայն, այլ ազգային. մեզ համար անպատմելի ուրախութիւն կը լինի,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 20 յուլիսի

«Մշակ» լրագրի 121 համարում դուք «Թիւրքիայի հայոց ամտեսական դրութիւնը» վերնագրով ձեր յօդուածի ռուսերէն թարգմանած բրոշիւրի տպագրութեան և հրատարակութեան հաշիւը մեզանից պահանջում էք։ Մենք ամենայն ուրախութեամբ պատրաստ ենք հաշիւ տալ և եթէ մինչև այժմ ուշացրել ենք այս բանը, միակ պատճառն այն է եղել՝ որ բրոշիւրը չը նայելով որ բարեգործական նպատակով է ծախվում, յօգուտ Մոսկվայի չքաւոր ուսանողների, այնու ամենայնիւ շատ քիչ օրինակ է ծախվել։ Բոլորը համարեա միայն Մոսկվա է ծախված։

Ահա մեր հաշիւը։ Մուտք. պ. Գ. Արծրունուց տպագրութեան համար . . . . 100 ր. — կ.
Բրոշիւրների ծախելուց . . . 33 ր. 15 կ.
Ընդամենը 133 ր. 15 կ.
Տպագրված է 1500 օրինակ։
Ծախք. Սրբագրութեան համար պ. Տէր-Աւետիքեանցին . . . . 10 ր. — կ.
Տպագրութեան համար . . . 80 ր. — կ.
Փոստի ծախք պ. Գ. Արծրունուն 100 օր.—բրոշիւրի ուղարկելու համար . . . . . 3 ր. 15 կ.
Զանազան հայ և ռուս խմբագրութիւններին ուղարկելու. . . . . 77 կ.
Ընդամենը 93 ր. 92 կ.
Ուրեմն առձեռն մնում է . (133 ր. 15 կ. / 93 ր. 92 կ.) 39 ր. 23 կ.
Այդ մեր ձեռին եղած գումարը 39 ր. ուղարկում ենք պ. Գ. Արծրունուն. . . . . 39 ր. — կ.
Առաջուց ուղարկել ենք պ. Գ. Արծրունուն 100 հատ իր բրոշիւրից 25 ր. — կ.
Ընդամենը 64 ր. — կ.

Ուրեմն պ. Արծրունու մեզ փոխ տուած 100 ր. պարտքից մենք վճարած ենք 64։ Մնում է 36 ր., որը կը հատուցվի, երբ բրոշիւրները կը ծախվեն։ Ապա բոլոր օգուտը կը գործադրվի յօգուտ չքաւոր ուսանողների։ Բրոշիւրը *) ստանալ ցանկացողներին խնդրում ենք դիմել մեզ հետևեալ հասցէով։ Въ Москву, студенту Петровской Академіи Аветису Калантарову. կամ թէ въ Москву. Въ книжный магазинъ Мамонтова на Кузнецкомъ мосту.

Մեր հաշիւը ի հարկէ կատարեալ չէ, որովհետև մենք Պետերբուրգ և ուրիշ տեղեր բրոշիւրներ ենք ուղարկել և չը գիտենք, թէ ինչ դրութեան մէջ են այնտեղ գործերը։ Այնու ամենայնիւ «Մշակի» 121 համարում երևացած նկատողութիւնից յետոյ մենք պարտք համարեցինք այս փոքրիկ հաշիւը ներկայացնել, երկմտութեան առիթը վերացնելու համար։

Ի վերջոյ մեր շնորհակալութիւնը յայտնելով պ. Գ. Արծրունուն, որ նիւթապէս օգնել է մեզ մեր նպատակին հասնելու, մի և նոյն ժամանակը չենք կարող ծածկել մեր զարմանքը, որ նա այդպէս շուտ մոռացել է որ այդ գործը պ. Հ. Աւաքեանցի (բրոշիւրի թարգմանչի) գնալուց յետոյ մեզ վրա է մնացած, քանի որ մեզանից մէկը անցեալ տարի եղել է Թիֆլիս պ. Գ. Արծրունու մօտ և յայտնել է որ այժմ այդ գործերը մեր ձեռին են։

Յ. Տէր-Մովսէսեանց, Աւ. Քալանթարեանց
Գ. Իւզբաշեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մեղրի, յուլիսի 15

Յուլիս ամսի մէկին, ընիկ բնակիչներից մէնի տունը ենթարկվեցաւ սարսափելի և գիւղում չը տեսնված հրդեհի, որի հետևանքը եղաւ այն՝ որ կարճ միջոցում տունը, և միջի եղած բոլորը այրվեցաւ, կարճ միջոցում խեղճ տանտէրը կորցնելով իր բոլոր կարողութիւնը, ընկաւ դառն աղքատութեան մէջ։ Աւելորդ չենք համարում շնորհակալութիւն մատուցանել այն անձանց, որոնք հրդեհի վտանգները մի կողմ թողած, մեծ ջանք էին թափում, հրդեհի սաստկութիւնը նուազացնելու, չը թոյլ տալու որ հարևան տները ևս ենթարկվեն նոյն վիճակին, մանաւանդ որ կարծում էին բոլոր գիւղը նոյն վտանգին կենթարկվի։

Եւ սա օտարոտի չը պէտք է թւի, ըստ որում գիւղացիք քօլ ասված գիւրավառ փայտը, և նոյնպէս չերամի որթի համար գործ ածած թըթենու մնացորդները, նոյնպէս և բոլոր փայտեղէնը, և խոտեղէնը պահում են իւրաքանչիւրը իր տան մօտ, բաց դրութեամբ. այդ տեղերը միմեանց չատ մօտ գտանվելով, առիթ էին տալիս կարծելու որ վնասը ընդհանուր գիւղին պիտի հասնի, սակայն Աստուծոյ ողորմութեամբ, միայն մէկ տունն այրվելով ամեն բան վերջացաւ։ Բայց այնու ամենայնիւ այդպիսի վտանգների յաճախ կրկնվելու կարելիութիւնը աչքի առաջ ունենալով, աչքի առաջ ունենալով և այն դիւրավառ նիւթերը, որ դարսած են գիւղի մէջ, հրաւիրում ենք Մեղրիի տանուտէրի ուշադրութիւնը, որ պատուիրէ հասարակութեանը, գիւղից դուրս տանելու և շրջակայքում տեղաւորելու այդ փայտեղէնները, իսկ եթէ տանուտէրը անկարող է այդ անել, խնդրում ենք մեծ. պ. գաւառապետին իր ուշադրութիւնը դարձնել գիւղի վատ դրութեան վրա. հրդեհի երկիւղի կողմից վերջացնելով այն սխրալի նիւթի վրա մեր խօսքը, չենք կարող վկայ չը կանգնել հասարակութեան խորին շնորհակալութեան առ պ. պ. Ասլան Սէլիք-Ասլանեանցին և Խաչատուր Միսեանցին, որ կարճ միջոցում հաւաքեցին ստորագրութեամբ, յօգուտ վնասված ընտանիքի մի գումար, մօտ երեք հարիւր բուբլ, բայց ստորագրութիւնը դեռ շարունակվում է. յոյս ունենք որ Մեղրիի պատուելի հասարակութիւնը չի զլանայ շարունակել իր օգնութիւնը յօգուտ վնասեալ ընտանիքին։

Խաչատուր Մալումեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարում մենք տպում ենք Մոսկվայից ստացած մի նամակ, որի մէջ մեզ հաշիւ է տրված «Эконом. Пол. Тур. Армянъ» բրոշիւրի ծախելու մասին։ Մենք եթէ տպեցինք մեր նկատողութիւնը այդ բրոշիւրի մասին, դրա համար չէր, որ փոքր մեզ շուտով ուղարկվի, այլ դրա համար որ յայտնվի թէ ում մօտ է ծախվում յիշեալ բրոշիւրը, որովհետև մենք խմբագրութեան մէջ մի քանի հատ ունենք միայն, իսկ ամեն կողմից մեզ են դիմում, մինչև անգամ քսան, երեսուն հատ միանգամից ուղեցնելով այդ բրոշիւրից։ Այդ պատճառով մենք առաջարկում ենք նամակ գրող պարոններին հետևեալը. մենք կառնենք իրանց ձեռքում և գրավաճառի մօտ մնացած բոլոր բրոշիւրները, փոքր կուղարկենք մեր աշխատակից Ն. Տէր-Գէորգեանին որ կը հասցնի պարոններին, իսկ բրոշիւրները կը խնդրենք խմբագրութեան անունով մեզ ուղարկել։ Այդպիսով փոքր յօգուտ ուսանողների պարոնները իսկոյն կունենան, իսկ մենք հետզհետէ կը ծախենք բրոշիւրը։

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք որ այն յանձնաժողովը, որ զբաղված է արտակարգ միջոցներ մշակելով, դիտաւորութիւն ունի ամբողջ Ռուսաստանը բաժանել երեք տեսակ տեղերի վրա. հանգիստ տեղեր, կասկածաւոր տեղեր և տեղեր որոնք բացարձակապէս յայտնված են պաշարման դրութեան մէջ։

—

«Новое Время» լսեն է որ երեկի ռուսաց վիպասան Տուրգենեվ այս ամառը գիւղում կանցկացնի և դիտաւորութիւն ունի հրատարակել մի քանի ժողովրդական և մանուկների ընթերցանութեան համար գրուածներ։

—

«Южный Край» լրագիրը լսել է որ կառավարութիւնը դիմել է Խարկովի քաղաքային դումային և դիմելու է նոյնպէս զէմստվոյին, հրաւիրելով նրանց իրանց կարծիքը յայտնելու այն փոփոխութիւնների մասին, որոնց ցանկալի է իրագործել բէալական դպրոցների մէջ։

—

«Московскій Телеграфъ» հաղորդում է որ լուր կայ թէ ստատս-սեկրէտար Գիրս շուտով նշանակվում է ռուսաց դեսպան Կ. Պոլսի մէջ։

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ հետևեալ լուրեր են հաղորդում։ «Վլադիկավկասի մշտական ռուս զերասանական խմբից մի քանի անձինք տուեցին այստեղ մի քանի ներկայացումներ յօգուտ քաղաքիս ուսումնարանների։ Թէրէք գետը սաստիկ մեծանալով բաւական վնասներ է տուել քաղաքին, իսկ գետի վրա գտնված կամուրջը չատ վատ դրութեան մէջ է. փայտերը արդէն կատարելապէս փտած են, ամեն տեղից կարկատած է կամուրջը։ Մի քանի շրջակայ գիւղերի և քաղաքի մէջ յարակցութիւնը կտրված է ջրի մեծանալու պատճառով։ Լսվում է թէ եկող տարվանից պիտի բացվեն Մօզդոկում տղայոց և օրիորդաց պրոգիմնազիաներ։ Ժողովուրդը այդ լուրի պատճառով չատ ուրախ է։ Մօզդոկեցիները մտադիր են Կ. Պոլսի «Միացեալ» ընկերութեան մի օժանդակ ընկերութիւն հիմնել։ Մեր բարձր հասարակութեան թէ իգական և թէ արական սեռը ամբողջ գիշերները անցնում է կըլուբում թուղթ խաղալիս»։

—

ԴԶԼԱՐԻՑ մեզ գրում են որ թեմական առաջնորդ Գէորգ Վեհապետեան Ղզլար եղած ժամանակ յորդորում էր մի հարուստ հային իր ծախսով կառուցանել մի շինութիւն օրիորդաց դպրոցի համար, բայց ինքն սրբազանը, չատ հարուստ լինելով, իր գրպանից ոչինչ չէ տուել ազգային այդ նպատակի համար։

—

Մօզդոկից մեզ գրում են Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեան, մեր եպիսկոպոսների մէջ ամենահարուստներից մին լինելով, այս օրերս նուիրել է կառավարութեանը, բարեգործական նպատակով 7500 բուբլ։ Ներքումս նա մի չը քանչան է ստացել։

եթէ հայազգի ոմն փարիզ գալով մեր ընթերցարանում կարող լինի գտնել որ և իցէ զբաղմունք իր գործերէն ազատ եղած ժամանակը։ Բայց այս ևս պէտք է ասեմ, որ փառք մեր ռուսաբնակ հայազգի եղբայրներին և ոչ փառք տաճկաբնակներին, կարծես թէ՝ այս վերջինները սրտի տեղ քար են կրում իրանց կուրծքերում»։

Խեղճ, խեղճ երիտասարդներ, մտածեցի ես, ինչպէս ադնիւ է ձեր սիրտը և միանգամայն ինչպէս պարզ, դուք հաւատացած էք, թէ ամեն մի հայազգի այն սիրան ունի, որն ունէք դուք. ահ թէ որքան սխալվում էք, միայն տայ Աստուած, որ աւելի երկար սխալվէք և չուտով չը ճանչնաք իրողութիւնը, քանզի կը վախնամ, որ իրողութիւնը ճանչնալով դուք ևս յուսահատվիք։

Ընթերցարանում գտնվող հայր-սուրբը գերապատիւ Խորէն վարդապետ Ստեփանէն էր, որ եկած էր Փարիզ մանկավարժութիւն ուսանելու, նրա և ուսանողների մէջ բացված վէճի պատճառն այն էր, որ հայր սուրբը նախատում էր Փարիզի ուսանողներին, թէ ինչու նրանք չեն գնում պրոֆեսոր Դիւլօրիէի դասերը լսելու, իսկ ուսանողները նրան ապացուցանում էին, որ նրանց համար մի մեծ օգուտ չը կայ այդ հայկաբանի դասերից, որովհետև պ. Դիւլօրիէն միայն կարդացնել է տալիս աշակերտներին գրաբառ Խորենացին կամ Եղիշէ և թարգմանել տալիս գաղղիերէն, իսկ նրանք, ուսանողներից շատերը առաջին՝ լաւ չեն հասկանում գրաբառը, և երկրորդ՝ նրա դասերին գնալով՝ իրանց պրոֆեսորների (իրաւաբանութեան, բժշկութեան և այլ) դասերից են զրկվում, որովհետև բոլոր պրոֆեսորների դասախօսութիւնները մի և նոյն ժամանակն են լինում։ Հայ ուսանողները խընդրել են պ. Դիւլօրիէին, որ կամ ճաշից յետոյ նշանակէ իր դասերը և կամ կիրակէ օրերը, որպէս զի նրանք ևս կարողանան լսել նրան, բայց պատուարժան գիտնականը չէ ընդունել ուսանողների խնդիրքը. չը նայելով դրան այս վերջինները մի կարգ են դրել իրանց մէջ, որ նրա ամեն մի դասին գնէ երկու հայ ուսանող գնվի։ Էլ ինչ անեն խեղճերը, միթէ կարելի է պահանջել, որ դրանք թողնեն իրանց պարապմունքները և միայն Դիւլօրիէի դասերը լսեն, չէ որ այդ կը վնասէ նրանց ուսման ընթացքին և նրանք յետ կը մնան իրանց ընկերներից, այն ժամանակն էլ պէտք է ասենք, թէ մեր ուսանողները միայն Փարիզի բուլվարներն են չափում ու սրճանոցները յաճախում և իրանց գործով չեն պարապում. որքան զրպարտութիւն. ամբողջ երկու ամիս մնացի Փարիզ և գոնէ մի անգամ մի հայ ուսանող չը տեսայ բուլվարի վրա, իսկ թէ նրանք երբեմն մի սրճարան կը մտնեն և որ և իցէ քսան սանթիմի մի բաժակ սուրճ կը խմեն և մի երկու լրագիր կը կարդան, միթէ դա պարսաւելի է։

Որովհետև արդէն վերը յիշեցի պ. Դիւլօրիէի անունը, ուստի աւելորդ չէր լինի մի քանի խօսք ասել այստեղ այն գաղափարի մասին, որը տուել է գերապատիւ Խորէն վարդապետը վերոյիշեալ պարոնին մի հայկական օրագիր հրատարակելու (ի հարկէ գաղղիերէն լեզուով) և որի համար արդէն տեղեկութիւն կար պատուական «Մշակի» մէջ և մինչև անգամ, սրտի ուրախութեամբ պէտք է ասեմ (որովհետև այդ ցոյց է տալիս, որ շատերը անտարբեր չեն զէպի ազգային հարցերը), տեսանք մի քանի պատուական անձանց ցանկութիւնը բաժանորդ գրվել այդ օրագրին։

Բայց նախ և առաջ ներում ինձ հարցնել— ինչու համար ենք մենք ցանկանում օրագիր ունենալ Փարիզում կամ մի այլ եւրոպական կենտրոնում. ինձ կը պատասխանեն թէ մենք ցանկանում ենք Եւրոպայում մի օրագիր ունենալ նրա համար, որ կարողանանք նրա միջոցաւ ծանօթացնել եւրոպացի քաղաքակրթեալ ազգերը մեր ազգի հետ, սրա քաղաքական, մտաւորական և տնտեսական կեանքի հետ և այդպիսով գրաւել եւրոպացւոց համակրութիւնը, նրանց սիմպատիան. շատ դեղեցիկ միտք, սքանչելի գաղափար և միայն ափսոս, որ այդ շատ տարիներ առաջ չէինք արած։ Բայց արդեօք մենք կը հասնենք մեր նպատակին, եթէ այդ գործին ձեռնամուխ լինի նոյն իսկ գերահռչակ Դիւլօրիէն. ոչ. պատասխանում եմ ես և ահա ինչ պատճառներով. նախ՝ Դիւլօրիէն յայտնի է Ֆրանսիայի մէջ և գիտնականների շրջանում իբրև մի մասնագէտ, մի գիտնական, ուրեմն նրա հրատարակած օրգանի վրա պէտք է նայեն իբրև մի մասնագիտութեան օրգանի վրա և դրա համար իսկ դա պէտք է կարդացվի ոչ թէ ամբոխից, ժողովրդից, որը գլխաւորապէս մեր ցանկութիւնն է և նպատակը, այլ միայն գիտնականներից, որոնցից մեզ մէկ մեծ օգուտ չը կայ. երկրորդ՝ արդեօք պ. Դիւլօրիէն յայտնել է Խորէն հայր սուրբին կամ մի ուրիշ անձի իր օրագրի պրոգրամը, ոչ. ուրեմն ինչ երաշխաւորութիւն, ինչ գարանտիա ունենք, որ նա իր օրագրի մէջ չի տպի հայոց հին պատմութիւնը Հայկէն սկսած, կամ նոյն իսկ Խորենացւոյ թարգմանութիւնը, այլ կը գրէ հայոց ներկայի մասին։ Եթէ մի բոպէ ենթադրենք, թէ նա ամենայն ազնուութեամբ կը կատարէ իր վրա վերցրած պարտաւորութիւնը, հարցնում եմ, արդեօք նա ինքը ծանօթ է մեր ներկայի հետ, ինչն է ցոյց տալիս թէ նա ծանօթ է, ապրած է հայերի հետ, ճանապարհորդած է Հայաստան, հետազօտած է հայի կեանքը. յայտնի չէ, ուրեմն ուսկից պէտք է նա ժողովէ իր նիւթերը, իր թղթակիցներէն, ովքեր են դրանք. նա չէ կարող Հայաստանի ամեն կողմերում ունենալ իր սեփական թղթակիցներ, որովհետև նիւթական միջոցները չը պիտի ներեն, թէ ինչու, այդ մենք փոքր ինչ յետոյ կը տեսնենք, իսկ կամաւոր թղթակիցները պիտի կարողանան տալ նրան պատշաճաւոր նիւթեր, կամ նոյն իսկ ինքը կարող է արդեօք որոշել պիտանին անպիտանէն, զանազանել ճիշդը սխալէն, չէ որ դրա համար պէտք է ժողովրդի կեանքը, հոգին գիտնալ, ճանաչել։ Երբորդ՝ յարգելի հայկաբանը պահանջել է միայն երկու հարիւր բաժանորդներ, որպէս զի կարողանայ իր օրագիրը հրատարակել. այստեղ կը համարձակիմ հարցնել, որքան պէտք է լինի բաժանորդական գինը, յուսամ որ ոչ առաւել քան հարիւր ֆրանկ (40 բուբլի) տարեկան, ուրեմն ընդամենը նա պէտք է ստանայ 20,000 ֆր. զիցուք թէ հայասէրների թիւը մի երևնալի զօրութեամբ չատացաւ և հայկական օրգանի կարդացողների թիւը կրկնապատկվեց, հասաւ 400-ի, այն ժամանակ եկամուտը կը լինի 40,000 ֆր. (մի մոռանաք որ ես չափազանցութիւն եմ անում, աւելի եմ վերցնում), բայց միթէ Փարիզի մէջ կարելի է մի որ և իցէ օրինաւոր օրագիր կամ լրագիր հրատարակել 20 կամ 40 հազար ֆրանկով և այդ փողով էլ դեռ իրեն համար սեփական թղթակիցներ պահել զանազան հայաբնակ տեղերում։ Ով այդ բանը ինձ կը ասէ, ես համարձակապէս կասեմ, որ նա քիչ տեղեկութիւն ունի գործի էութիւնից. Փարիզի մէջ որ և իցէ պատշաճաւոր խմբագրութիւն բա-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Իտալական Միջերկրական նաւատորմի հրամանատարը Բրինդեզիից հրաւիրված է հոսմանեան հրահանգներ ստանալու համար։ Ասում են, որ նաւատորմը Վենետիկ գնալու տեղ կուղևորվի Տունիս։ Մինիստր Մանչինի չափազանց անբաւական է Ֆրանսիական կառավարութեան պատասխանից, որով նրան առաջարկվում է դիմել Տունիսի բէյին և նրանից պահանջել վարձատրութիւն Սֆաքսի մէջ ջնջված իտալացիների համար։ Իտալիան պատահած անցքերի համար պատասխանատու է համարում միայն Ֆրանսիական կառավարութեանը։

Նորերումս Վատիկանի մէջ պապի նախագահութեամբ հաւաքվեցաւ կոնսիստորիան, որի նիստը տևեց ամբողջ երեք ժամ։ Պապը լատիներէն լեզուով մի երկար ճառ արտասանեց և յետոյ հաստատեց հայ կաթոլիկների պատրիարք եպիսկոպոս Ազարեանին և Բոսնիայի և Հերցեգովինայի եպիսկոպոսներին։ Պապի ճառի մի մասը նուիրված էր Ազարեան եպիսկոպոսի ծառայութիւններին և Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ կաթոլիկութիւնը տարածելուն։ Ասում են, որ պապը յիշեց այն անցքերը, որոնք պատահեցան հանգուցեալ պապի մարմնի տեղափոխութեան ժամանակ։ Պապական կառավարութիւնը մի շրջաբերական էր ուղարկել սպանիական կառավարութեանը այն անկարգութիւնների վերաբերութեամբ, որոնք պատահեցան Պիոս IX մարմնի տեղափոխութեան ժամանակ։ Սպանիան իբրև կաթոլիկական պետութիւն իր պատասխանի մէջ ցաւակցութիւն է յայտնում պատահած անկարգութիւնների առիթով և յայտնում է, որ իր միջազգային պարտականութիւնները նրան թոյլ չեն տալիս միջամտել Իտալիայի գործերին։

ՖՐԱՆՍԻԱ

Ոչ մի տեղ այնքան շատ չեն գրում Ֆրանսիայի մասին, որքան իտալական լրագիրների մէջ։ Գրում են ոչ թէ միայն Ֆրանսիայի այժմեան գժուարութիւնների մասին Տունիսի և Ալժիրիայի մէջ, այլ և այն ապագայի մասին, որ նա պատրաստում է իր համար իր արտաքին անխոհեմ քաղաքականութեամբ։ Մինչև անգամ Ֆրանսիայի ներքին գործերի դրութիւնը իտալական լրագիրներին չափազանց անմխիթար է երևում։

Ֆրանսիային „սպառնացող վտանգները“ նիւթ են դարձել իտալական մինչև անգամ այնպիսի լրագիրների համար, որոնք միշտ Ֆրանսիական քաղաքական կազմակերպութիւնը օրինակելի են համարել։ Նորերումս այդպիսի բովանդակութեան մի յօդուած տպեց իտալական մի լրագիր, որ միշտ Ֆրանսիայի պաշտպան է եղել և որ մինչև այժմ էլ չէ կարող հաշտվել այն մտքի հետ, թէ Իտալիայի ապահովութեան համար պէտք է դաշնակցութիւն կապել Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի հետ։

Լրագրի կարծիքով Ֆրանսիային կորուստ է սպառնում, եթէ նա չի փոխի իր բռնած ընթացքը, և որ նրա կորստեան պատճառը կը դառնան իր սեփական սխալները և ոչ թէ արտաքին թշնամիները։ Այդ սխալները նրա մէջն են կայանում, որ Նապոլէօնի կայսերութեանը կորուստ պատճառող նախապաշարմունքներից հրաժարվելու փոխարէն, Ֆրանսիական հանրապետական կառավարութիւնը իր ոյժը հաստատելու համար դիմում է նոյն միջոցների, որոնց վրա ուշադրութիւն էին դարձնում նախկին կառավարութիւնները։ Հանրապետական կառավարութիւնը, հետևելով իր նախորդների օրինակին, աշխատում է պատերազմական փառքով բաւականութիւն տալ ազգային ինքնասիրութեանը, կամենում է յաղթութեան փառքով ծածկված լինել և չէ խնայում երկրի հարստութիւնը ուժեղ զօրքեր պահելու համար, իսկ այդ զօրքերի համար աւելի ծախս է հարկաւոր, քան թէ Գերմանիան ունի։ Գործերի այդպիսի դրութեան համար իտալական լրագիրները մեղադրում են Գամբետային։ Նա անդադար աշխատում է վառ պահել ժողովրդի երևակայութեան մէջ վրէժխնդրութեան գաղափարը և նրա իւրաքանչիւր ծառի մէջ կարելի է այդպիսի օգի նկատել։ Վրէժխնդրութիւնը Գամբետայի քաղաքական նախագծի վերջնական նպատակն է։ Բայց հեշտ չէ Գերմանիայից վրէժխնդիր լինել, քանի որ նա չափազանց հաստատ կազմակերպութիւն և նշանաւոր պատերազմական ոյժեր ունի։ Այդ պատճառով Ֆրանսիական հանրապետական կառավարութիւնը, չը բաւականանալով ահագին ծախսերով զօրքերի համար, վաղուց դաշնակիցներ է փընտռում։ Այդ նպատակին հասնելու համար Բիսմարկի կենդրեսի ժամանակ Ֆրանսիան ուժեղների կողմն էր բռնում թոյլերի դէմ, իսկ հանրապետական լրագիրները ընդդէմ էին անգլիական ազատամիտների և պաշտպանում էին պահպանողականներին։ Այսպիսով Ֆրանսիայի թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութիւնը հակասող է։ Զօրքերով զբաղված և պատերազմը վերջնական նպատակ ընտրած քաղաքականութիւնը անբաւականութիւն սերմանեց հանրապետականների և արմատականների մէջ և մեծ ոյժ տուեց սոցիալական կուսակցութեանը։

Հանրապետութիւնը չէ կարող պատերազմական այնպիսի ընթացք ունենալ, որով միապետութիւնը իրան պահպանում է։ Այսպիսի դէպքում նա կամ կը կորչի իրան շրջապատող միապետութիւնների ճնշումից կամ այն գեներալի ձեռքը կընկնի, որ յաղթութեան փառքով պսակված կը փարագառնայ պատերազմական դաշտից իր հայրենիքը։ Ֆրանսիան ի հարկէ կարող է ուղարկել Աֆրիկա հարիւր կամ երկու հարիւր հազար զօրք, ճնշել Ալժիրիայի ապստամբութիւնը, հնազանդեցնել Տունիսի մահմեդականներին և նուաճել Տրիպոլիս և Մարոկկո։ Բայց հէնց այդ ժամանակ նրա դրութիւնը փոանգաւոր կը դառնայ։ Նրա յաղթութիւնները միւս պետութիւնների նախանձը կը յաղեցնեն և նա ստիպված կը լինի նոր պատերազմներ սկսել։ Եւ որովհետև պատերազմական բաղդը մշտապէս չէ օգնում մի պատերազմական ժողովրդի, ինչպէս փորձել է ինքը Ֆրանսիան, ուրեմն հեշտ է երևակայել, թէ ինչ կը պատահի Ֆրանսիայի հետ հէնց որ նա առաջին անգամ կը յաղթվի։ Այդ ժամանակ ներքին ապստամբութիւնը անհրաժեշտ կը դառնայ։ Սոցիալական կուսակցութիւնը գլուխ կը բարձրացնի և, անկարող լինելով իրագործել իր անորոշ տէօրիաները, դաւադրութիւններ կը ծագեցնի, որոնց ճնշելու համար արիւնհեղութիւնը անհրաժեշտ կը դառնայ։ Այս դէպքում ակներև է հանրապետութեան կորուստը։ Ֆրանսիայի պատմութիւնը 1792 թուականից մի լաւ դաս է հանրապետական գործիչների համար։

Ֆրանսիայի դրութիւնը այդպիսի մռայլ գոյներով նկարագրում է իտալական դէմոկրատների լրագիրը, որ չափազանց համակրում է Ֆրանսիական հանրապետութեանը և ցանկանում է նրա բարօրութիւնը։ Լրագրին անհանգստացնում է ոչ թէ միայն Ֆրանսիայի դժբաղդութիւնը, այլ և այն հետևանքները, որոնց կը հանի ազատամիտ Եւրոպան, երբ քաղաքական ազատութեան և արդարութեան գաղափարները ճնշված կը լինեն Ֆրանսիայի մէջ։

ԹԻՒՐՔԻԱ

Սուլթանը մասնաւոր տեսութիւն ունեցաւ Ֆրանսիական հաւատարմատար կոմս Մօնտեբելոյի հետ։ Տեսութիւնը մի ժամից աւելի տևեց և բարեկամական բնաւորութիւն ունէր։ Սուլթանը ցանկութիւն յայտնեց պահպանել Ֆրանսիայի հետ բարեկամութիւնը և եռանդով բողոքեց այն նենգադրութեան դէմ, իբր թէ թիւրքաց զօրքերի Տրիպոլիս ուղարկելը Ֆրանսիայի դէմ թշնամական նպատակներ ունի։ Այդ նահանգը բաւականաչափ զօրքեր ուղարկելով հանգստութիւնը պահպանելու և օտարազգիներին պաշտպանելու համար, Բ. Դուռը մի և նոյն ժամանակ Տրիպոլիսի նահանգապետին հրաման է ուղարկել, որ նա ընդդիմադրի ամեն տեսակ փորձերին հարևան երկիրների մէջ հանգստութիւնը խանգարելու համար։ Սուլթանը աւելացրեց, որ այլ ևս Տրիպոլիս զօրքեր չեն ուղարկվում և ցաւակցութիւն յայտնեց, որ չը կարողացաւ տեսնվել Ֆրանսիական դեսպանի հետ նրա գնալու ժամանակ։ Այդ տեսակցութեան վերջը սուլթանը նորից ցանկութիւն յայտնեց շարունակել բարեկամական յարաբերութիւններ Ֆրանսիայի հետ, որ թիւրքիայի ամենահին դաշնակիցն է։

„Հավասի“ ընկերութիւնը հաղորդում է, որ նորերումս Կ. Պոլսի մէջ կալանաւորվեցաւ մի մարդ Մահմուդ Ջէզաւէրլի անունով, որ միջնորդ էր թիւրք ֆանատիկոսների և Ալժիրիայի ապստամբների մէջ։ Ֆրանսիական հիւպատոսը թիւրք պոլիցիականների հետ ուղևորվեցաւ նրա բնակարանը, կալանաւորեց Ջէզաւէրլիին և նրա տունը խուզարկեց, բայց այդ խուզարկութիւնները ոչինչ հետևանք չունեցաւ։ Կալանաւորվածը Ալժիրիա կուղարկվի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

նալու համար ամենապակասը պէտք է 200—250 հազար ֆրանկ. գրեցէք և իմացէք և կը տեսնէք, որ ասածս ճիշդ է։ Ուրեմն այդ ինչ օրագիր է, որ քսան հազարով է գլուխ գալիս, գուցէ տարին մէկ կամ երկու անգամ պէտք է լոյս տեսնէ, այն ժամանակ խօսք չունեմ ասելու, բայց դա օրագիր չի լինի, այլ բրօշիւրա կամ շատ շատ գիրք մի, դրանով էլ մենք եւրոպացոց չենք ծանօթացնի մեզ հետ։

Ինձ կարող են ասել, թէ ինչու բաժանորդագինը ես նշանակում եմ հարիւր ֆրանկ, երբ կարելի է երկու հարիւր անել. շատ դեղեցիկ, կարելի է հազար ևս անել, բայց տուողն ով է. գուցէ մի քանի հայազգի ազգասիրութենէն շարժուած բաժանորդ գրվեն, սակայն էլի եւրոպացիք չեն կարդայ. նա, որ տվող է լրագրի համարին 5 սանթիմ (2¼ կոպէկ) կամ, որ ամենաթանդն է 25 ս. (11 կոպ.) տալ, միթէ հարիւրաւոր ֆրանկներ կը վճարէ ձեր լրագրին. իսկ թէ օրագիրը լաւ է բաժանվում հայերի մէջ, ինչ օգուտ, հայերը հայ օրագիրները կարդային, մնաց գաղղիերէնը։ Զորրորդ՝ դիցուք որ և իցէ կերպով օրագիրը հաստատվեց, հարցնում եմ ես, եթէ պ. Դիւլօրիէն մի վեց ամսից յետոյ դադրեցրեց իր հրատարակութիւնը, ինչ պէտք է անենք, դատ պէտք է բանանք նրա դէմ. բայց նրա հետ կապած պայմանագիր ունենք, ոչ. ուրեմն փողերը պէտք է կորչեն և մենք չը պէտք է հանենք մեր նպատակին. մի ուրիշ կէտ՝ Դիւլօրիէն արդէն հասակը առած մարդ է ու մեզ պէս մահկանացու, Աստուած մի արասցէ, մի երկու տարուց յետոյ վախճանվեց, ունենք արդեօք մի ուրիշ անձ, որ նրա սկսած գործը շարունակէ, ոչ, ուրեմն օրագիրն էլ պէտք է դադարի, այո. դրան ամները ասում են по губамъ только помазать։ Ահա այն գլխաւոր կէտերը, որոնց վրա ես կը ցանկանայի դարձնել սիրելի ընթերցողի ուշադրութիւնը այդ հարցի մասին, մէկդի թողնելով մի քանի պարագաներ, որոնք աւելի հակառակ են Դիւլօրիէի օրգանին, քան թէ յօգուտ։ Ապա ուրեմն ոչինչ չանենք, եւրոպայում մեր հայկական օրգան չունենանք, կը հարցնէ ինձ տարեկուսած ընթերցողը. ես այդ չասեցի, ընդհակառակը, իմ կարծիքով, ոչ թէ մէկ, այլ մի քանիսը պէտք է ունենալ և ոչ թէ միայն Փարիզում, այլ և Լօնդրայում, Բերլինում և Պետերբուրգում, բայց թէ ինչպէս, ես դրա մասին կը խօսեմ մի ուրիշ անգամ, եթէ ձէրը յաջողեց, իսկ այժմ փոքր ինչ խօսենք Փարիզի Հայկազեան—Ուսումնասիրաց ընկերութեան մասին։

Այո, այդ ընկերութեան մասին բաւական խօսված է, բաւական գրված է, բայց աւաղ մեր հասարակութիւնից շատերը չը հասկացան դրա նշանակութիւնը, որովհետև եթէ հասկանային ապա ուրեմն և կը համակրէին, մինչդեռ մինչև այժմ համակրութիւն գրեթէ չը կայ, կամ լաւ է ասել, շատ քիչ է. ամենք էլ բոլորովին ծուռ հասկացան դրա նպատակը, ահա մի օրինակ. իմ Փարիզ եղած օրերս մի օր գալիս է ինձ մօտ այդ ընկերութեան ատենապետը և տխուր դէմքով մի նամակ է տալիս ինձ կարդալու, նամակը Մոսկվայէն էր և այս բովանդակութիւնն ունէր. «Թէպէտ և Մոսկվայի հայ հասարակութիւնը բոլոր սրտով համակրում է ձեր ընկերութեանը, բայց ափսոս, որ չէ կարող նրան մի նիւթական օգնութիւն հասցնել, վասն զի այստեղ ևս կան չքաւոր հայազգի ուսանողներ, որոնց օգնելը տեղւոյս հայ հասարակութեան պարտքն է, ապա ուրեմն ձեր չքաւորներին նա օգնել չէ կարող...» (Նամակի հետ ուղարկված էր 200 ֆր. *)։

Այս վերջին խօսքերը կարդալուս ժամանակը պարոնը վեր թռաւ տեղից ու ձեռները դէպի ինձ մեկնելով բացականչեց «ծօ, եղբայր, ով է դոցանից օգնութիւն խնդրում Փարիզի հայ ուսանողների համար, որտեղ դրանք լսեցին կամ կարդացին այդպիսի մի խնդիրք մեր կողմէն. չէ որ մեր կանոնագիրը տպված ու ամեն տեղ ուղարկված է, կարդան և հասկանան գրուածը։ Մեր ընկերութիւնը հիմնուած է ոչ թէ տեղւոյս չքաւոր ուսանողներին օգնելու, այլ այն նպատակաւ, որ նա կարողանայ Հայաստանի խորքերէն երիտասարդներ բերել և ուսում տալով նրանցից պատրաստել ուսեալ ուսուցիչներ, երկրագործներ, արուեստաւորներ ազգի համար, մանաւանդ Ցանկասանեի Հայաստանի համար, որոյ վիճակը այն դառը դրութեան մէջն է, որ մինչև որ այդ անձինք օրըստօրէ աւելի և աւելի թաւալ չտրեան նրա մակերևոյթի վրա, նրա շրջապատող մառախուղը երբէք չի անհետանայ, նրա հորիզոնի վրա երբէք չեն երևայ արեգական կենսատու ճառագայթները *)։ Սակայն մենք հիմնելով այդ ընկերութիւնը՝ քաջ գիտէինք, որ մեր սեպհական ոյժերը շատ տկար են նպատակին հասնելու համար, և չենք հասնի նրան, եթէ ազգը մեզ չը կառկառէ իր օգնութեան հզօր ձեռքը, որովհետև ինքն ըստ ինքեան մենք ուրիշ ոչինչ չենք, եթէ ոչ միայն խեղճ ուսանողներ. մենք համոզված ենք, որ մեր յոյսերը ունայն չեն ելլէր, որովհետև եթէ ոչ ամբողջ ազգը, գոնէ նրա մտածող մասը, նրա ինտելիգենցիան կը համակրէ մեզ և կօգնէ. չէ որ օրից օր մեր բարձր ուսում առնողների թիւը շատանում է և նրանք գիտեն թէ լուսաւորութեան և մատուռական զարգացման բարձր և օգտաւէտ նշանակութիւնը և թէ դրանց անհրաժեշտութիւնը մեր ազգի համար։ Ահա ինչ է մեր նպատակը և ինչ են մեր յոյսերը, բայց ինչպէս այդ, նոյնպէս դրա նման նամակներից երևում է, դժբախտաբար, որ մեր ազգայինք մեզ չեն հասկացել. ինչ անենք, մեզ համար անհնարին է երկրէ երկիր, քաղաքէ քաղաք շրջել և ամենուն կենդանի խօսքով հասկացնել մեր դիտաւորութիւնը, մեր լրագիրներն ալ լռութեան կնիքը դրել են իրանց բերանին և ոչ մի խօսք չասեցին մեր ընկերութեան վերաբերութեամբ, միայն «Մշակը» խօսեց, նրա ձայնն էլ առ այժմ շատ թոյլ արձագանք գտաւ մերայնոց սրտերում։

(կը շարունակվի)

---

*) Նամակս արդէն աւարտել էի, երբ լուր առի որ ընկերութիւնը կրկին Մոսկվայէն սաստկել է 500 ֆր.։

*) Մօտերքս մի նամակ ստացայ Փարիզից իմ բարեկամէս, որ հետևեալը կը գրէ. «տաճկաց բռնած ընթացքը հայոց մասին օր աւուր կը վատթարանայ, և ինչպէս բերանացի յայտնած եմ անչուշտ ձեզ, այժմ ևս սկսած է Միացեալ ընկերութեան վարժարանաց և վերժանոցաց վրա բռնական միջոցներ ի գործ ածել։ Ցեսէք, որչափ արդարացի էին իմ կասկածներս, և որչափ իրաւունք ունէի, երբ կասէի, թէ այստեղ մենք, այսինքն հայերս, պէտք է մեր ընկերութիւնները տաճկական հարստահարութենէ ազատ պահելու համար, նրանց կենտրոնը եւրոպական ազատ քաղաքներու մէջ հիմնել, և ահա պարագաներն իրաւունք կը տան ինձ այսօր, և իմ հեռատեսութիւնս կապահովեն։»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ

Բոլոր բանաստեղծութիւնների ժողովածուն, տպած Մոսկվայում ամենաընտիր թղթի վերայ, հեղինակի վիմագիր պատկերով. գինը 50 կ. վաճառվում է ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Նոյն տեղը վաճառվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները.

1) Ռոբինզօն-կռուզօ՝ Աղանեան „ 60 կ.
2) Աշխարհի տարրակը՝ Լալայեան „ 10 „
3) Ծաղկաքաղ արձ. և չափ. բանից՝ Կոստանեան — „ 25 „
4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան — — — „ 40 „

Վերջին երկու դասագրքերից գումարով գնողները նշանաւոր զիջումն են ստանում։

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

Դուրս եկաւ մամուլի տակից

„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ առաջին հատորը երկրորդ տպագրութեամբ, ՓՈՓՈԽԱԾ, որի մէջ գտնվում են բացի այն բոլոր երգերից, որոնք յայտնի են ժողովրդին, նոյնպէս նոր ԵՐԳԵՐ, հատընտիր ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ և ԱՐՁԱԿ գրուածներ։

Վաճառվում է. ԹԻՖԼԻՍ՝ կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում, ԵՐԵՒԱՆ՝ պ. Աբգար Գուլամիրեանցի խանութում, ԲԱԳՈՒ՝ պ. պ. Գրիգոր Դիլզարեանցի և Ս. Տէր-Օհանեանցի խանութներում։ Օտարաքաղաքացիները կարող են դառնալ ԲԱԳՈՒ նոյնպէս „ՍՈԽԱԿԻ“ խմբագիր-հրատարակչին այս հասցէով. Аваку Лазаревичу Григоріанцу, въ Баку.

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 րուբլ։

Աւագ Գրիգորեանց: 5—5

ՀԷՆՑ ԽԱԿՈՅՆ ՍՏԱՑՎԵԼ են մեծ քանակութեամբ հրացաններ, ՌԵՎՕԼՎԵՐՆԵՐ, փամփուշտներ, ԹԷՑ առաջին տեսակի, բօկալներ և այլն։ ՉՕԿ ԲՕՐ (choke bore) ՀՐԱՑԱՆՆԵՐ George Dau-ի գործարանից 120 ր., ռեվօլվերներ բոլդօգ 11 րուբլուց, 700 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—40 րուբլ։ Ծախվում է նոյնպէս պարոսին կրակով և այլոմներ։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։

8—12

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ

ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ

ВЪ НАЙМЫ

Въ галлереѣ имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.

8—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ

Գալլէրէում կայ ջուր, գազի լուսաւորութիւն և հեռագրական կայարան։

8—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆեկտներ, ԿԱԿԱՕ, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԵՎՕԼՎԵՐՆԵՐ, պլոմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսրբիչներ, կլեոնկա, գուլպաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն։ ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մագնեզիա, խմոր ՇԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վառերկօզետի համար, պարսկական փօշի։

43—100

Вѣ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

Տեղափոխվեցաւ Գանօվսկայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՑԿԻՅ փողոցը № 11. Փօստատան ետեւի բուչան։ Ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով։

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա։

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բովանդակում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրօնական գրավաճառանոցում“, „կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօղարջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է 1 րուբլ 20 կոպ.։



ՎԱՐՇԱՎԱ: Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով ծախվում է Եւրօպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրօգիստների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Փարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Խլէկօրայնի փողոց № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խարդախումներից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեկնութիւնը և Փարիզի աշխարհահանդէսի մեդալները. Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

14—20 (1)

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԻԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Միքայել ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են գրել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

50—150

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ

Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաչաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն

7—100

Նուխու ազգային-հոգեւոր դպրոցին հարկաւոր է մի ուսուցիչ ռուսաց լեզուի և թուաբանութեան՝ 600 րուբ. ռոճիկով. այլ և հարկաւոր են ուսուցիչներ Ղարաբաղի և Նուխու գիւղական դպրոցների համար։ Ցանկացողներին խնդրում եմ շուտով գրել ինձ՝ Շուշի։

Թեմ. վերատեսուչ Յ. Տէր-Գրիգորեանց

3—5

Գրիգոր Տէր-Անտոնեան, որ առաջ բնակվում էր Կարս, իսկ այժմ տեղափոխվել է Թիֆլիս ընդունում է իր գիշերօթիկ տանը մէջ Թիֆլիսի ուսումնարաններում ուսանող օտարաքաղաքացի վեց ուսանողներ, որոց երեքը արդէն պատրաստ են, ամսական 25 րուբլիով։ Իմ հասցէն (Արծրունու քարվանսարում Քուրքչեանցի կանտորը № 93)

1—3

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՁԵՄԵՍՕՎ տեղափոխեց իր բնակարանը Արսենալնայա փողոց „Կրուժոկի“ շինութեան ետեւը, Գորբունովի տանը։ 2—5 (1)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ համար ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Պ. Մ. ԼԵԲԵԴԻՆՍԿԻ տեղափոխեց իր բնակարանը Օրլովսկու տանը խնամատարի մօտ։

2—5

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ լաւ տեսակի փունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ թէյ առանց ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ։

28—100

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմէօնեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Շրէբէրի „Տնային բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկը հայերէն. Թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմատեսակ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի։ Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար։ Գինն է 40 կոպ. ծախվում է „կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մօտ.“ Троицкій пер. типографія Вартанянца, въ Тифлисъ.

ԱԶԴ

Միացեալ ընկերութեանց տեսչութեան յանձնուած կոբայ Ս. Դանիէլ վանքի զարգացմանն համար մի ցուլով 10 խրիմու կովեր, և մի արուով 6 Ռուսական ձիեր հարկաւոր լինելով, ընկերութեան նիւթական միջակի անձկութեանը պատճառաւ՝ կեդրոնական ժողովը իւր վերջին նստին մէջ Տնօրէն ժողովոյ յանձնարարեց ազգայնոց առաջձեռնութեանը դիմել, մինչեւ անասունները ամբողջապէս կամ մասամբ հայթայթելու և Միացեալ ընկերութեանց նուիրելու համար։

Հայաստանի տնտեսական վիճակի բարւոքմանը նպաստող այս ձեռնարկը երկրին հողագործական անասնոց տեսակն ազնուացնելու օգուտն ես ունենալով, Տնօրէն ժողովը կը յուսայ թէ ընկերութեան հրաւէրն անլսելի չը պիտի մնայ։

Ի դիմաց Միացեալ ընկերութեանց Տնօրէն ժողովոյ

Ատենապետ Մ. Չերազ։

3—3

ՄՕԾԱԿՆԵՐ կոտրելու փոշի։ Ծախվում է ԾԱՏՈՒՐՈՎԻ լամպի մագազինում։

Дозволено цензурою, Тифлисъ 5 Августа 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.